Арцах, наш родной край, часто находился в центре военных действий. Арцах был вынужден постоянно с оружием в руках защищать свою независимость, право своего народа на свободу. Начну свой рассказ с типичной для Арцаха истории. В Карабахе шла война. Сражались все, независимо от возраста и пола. Сражались старики, юнцы, которым не было и шестнадцати, женщины. Не хватало оружия, боеприпасов. Сражались тем, что было под рукой, не жалея сил. Весь армянский народ встал под знамя борьбы с врагом. Не остались в стороне и члены моей семьи. Мой отец и два его брата, оставив учёбу в Ереване, вернулись на родину, чтобы в трудную минуту с оружием в руках защищать её. Военные действия уже шли повсюду.

В злополучный августовский день 1992 года когда война была в самом разгаре, погиб мой старший дядя, Гарник, которому было всего 23 года, который был женат всего 18 дней. Что успел он получить от жизни? Ничего...

Всё это пишу со слов моей бабушки. Она была не в себе после потери сына. Казалось, мир померк, потеряв свои яркие августовские краски. Жаждой мести были переполнены сердца родственников моего дяди, ещё ожесточеннее они сражались с врагом. Но судьба готовила новый удар моей семье. Не прошло и пятнадцати дней, как новая трагедия обрушилась на неё. В ходе боевых действий погиб мой младший дядя, Александр, который недавно встретил свою семнадцатую весну.

Сегодня я с трудом представляю, как всё это пережила моя любимая бабушка. Страшный удар судьбы… Потерять двух сыновей за пятнадцать дней! Сколько несбывшихся надежд! Но вот завершилась война, зародив в нас надежду на светлое будущее. Прошли чёрные дни, но в памяти моей семьи они отмечены печатью скорби. Сегодня я живу под мирным небом, благодаря погибшим героям. Помню, люблю своих родных, очень скучаю по ним. Надеюсь, что виновные получат по заслугам.

Мой отец – военный. Он грудью защищает родину. Защищает и каждый в окопе вспоминает погибших братьев. Разве это возможно забыть? Я стремлюсь быть похожей на моих родных, ставших моими идеалами. Я знаю, что они с небес смотрят на меня и оберегают меня.

Мне теперь не понять, кто же прав был из нас
В наших спорах без сна и покоя.
Мне не стало хватать ИХ только сейчас
Когда ОНИ не вернулись из боя...

Ես սիրում եմ քեզ, Արցախ

Լիանա Առուստամյան

Ես զավակն եմ դարերի և ավերում տեսած, բայց երբեք ծնկի չեկած մի ժողովրդի: Ես այն արդար ցորենի արտն եմ, որ դարեր շարունակ տրորվել է օտարի այրուձիների սմբակների տակ, այրվել հրդեհից ու երաշտից, որից փրկված մի բուռ ցորենը հասել է մեզ, դարձել հաց ու բարիք: Ես հայ եմ, ծնվել և ապրում եմ Նահիրյան երկրում: Արևածագերն այստեղ ավելի պայծառ են, ամպրոպները՝ ավելի շռնդալից, իսկ ծաղիկներն՝ ավելի գունեղ: Քամին այստեղ ավելի է զոհաբեր, ջերմուկներն այստեղ տաք են ավելի, ու ձյուներն էլ՝սպիտակ ավելի: Մեր երկրի կապույտ երկնքից կախված են վեհապանծ լեռներ: Նրանցով շրջապատված մի հողակտոր, ու այդ գողտրիկ հողում ծվարված մի ժողովուրդ՝ խրոխտ արծվի պես այդ լեռներին կառչած:

Թռիչքի համար են ծնվել արծիվները, բարձրունքից աշխարհին նայելու համար: Հպարտեմ ու վեհ, ինչպես հնամյա մեր լեռները: Բայց երբ փորձում են ընդհատել նրանց թռիչքը, կամ չար մի դիտավորությամբ դարանակալում ժայռածերպերում հյուսած բույնի մոտ, երբ խլել են ուզում ազատությունը, նրանք արդեն ցույց են տալիս իրենց թևերի թափը, մագիլների զորությունը: Այդպես փորձեցին նաև մեր բազկի ուժը, որն որպես երկնային պատիժ իջավ ազերի սակյատների գլխին:

Աշխարհասփյուռ ողջ հայությունը ոտքի կանգնեց թշնամու դեմ համահայկական պայքարին Արցախյան ազատամարտի տարիներին, ապացուցեց, որ մեզ համար խաղաղությունը պատերազմի բացարձակ հականիշ է: Մենք խաղաղությունը նվեր չենք ստացել, այն ձեռք ենք բերել մեր հայրերի, եղբայրների կյանքի գնով:

Կյանքի բեմահարթակում հաճախ հայտնված ու գլխավոր դերակատարում ունեցած երկիրս մշտական պայքարի մեջ երբեք չի կորցրել պայքարելու կամքը, ազատատենչ հոգու ուժը: Կորցրինք հազարավոր երիտասարդ կյանքեր, որոնք հավիտյան լռեցին ու դարձան լեգենդներ: Ամենքն իր սրտում անդարմանալի վերք ուներ, ամենքը կորցրել էր մի բան, որ նրա համար աշխարհի բոլոր բարիքներից թանկագին ու անփոխարինելի էր: Այս էր պատճառը, որ Արցախը այդ տարիներին կատարում էր մի ընդհանուր սուգ, որին մխիթարություն չկար: Մնում է մխիթարվել եղածով, պայքարել մեր նահատակված տղաների երազները իրականացնելու համար: Մեր մխիթարությունը թշնամու ճիրաններից փրկված և ազատ Հանրապետություն դարձած Արցախ աշխարհն է, Շուշին տուն բերած, զինվորական շքերթից դուրս եկած՝ մեր օրվա հետ արթնացող մանուկների կարկաչուն ծիծաղը: Գալիք սերունդը պետք է սփոսի որդեկորույս մայրերի և այրիացած կանանց վիշտը, գլուխ խոնարհի լույսի ճանապարհին անցած սուրբ նահատակների հիշատակի առջև:

Արյուն է հեղվել Արցախ աշխարհում, արյան անհատակ ծովում մարել են բազում մատաղ կյանքեր, թողել են պայծառ ու մաքուր անթիվ երազներ: Թանձր արյամբ ու արցունքով գրվել է հայոց պատմության մերօրյա էջը, հյուսվել է երգը հերոսության ու սխրանքի, որ կինչի դարեդար†

1988 թվականի փետրվարի 18-ը պատմական բեկումնային տարեթիվ էր: Հայոց պատմության այն արյունալի էջերից մեկը, որն ուղղված էր ազատությանը և անկախությանը: 1988 թվականին Ադրբեջանը սանձազերծվեց հայ-ադրբեջանական պատերազմ: Ադրբեջանական բանակը սկսեց լայնածավալ հարձակումներ հայ-ադրբեջանական սահմանի ամբողջ երկայնքով:

Ապրիլ† Գարունը լիարժեքորեն մտել էր իր իրավունքների մեջ, փթթում էր բնությունը, սակայն Արցախի բնակչությունը ստիպված պատսպարվում էր նկուղներում: Հոսանք, գազ վաղուց չունեին, սովին դիմանալ կարելի էր, իսկ ահա ծարավը† Ամենասարսափելին ջրի պակասն էր: Լվացքի և այլ պետքերի համար ձմռանը ձյունը հալեցնում էին, ջուր ստանում, գարնանը համեմատաբար հեշտ էր. անձրևաջրերը փրկում էին: Իսկ ահա խմելու ջուր հայթայթելու համար մարդիկ արհամարհում էին «Գրադը», գնդիկավոր և կեստոննանոց ռումբերը, այսինք՝մահը: Կյանքը կտային, բայց ջրով լի դույլից ոչ մի կաթիլ չէր թափվի: Ժողովուրդը ժամերով հերթ էր կանգնում ջրի ու հացի համար: Զգացվում էր գրեթե ամեն ինչի պակասը: Չնայած այդ բոլոր դժվարություններին՝ ժողովուրդը չէր հուսահատվում: Նա հավատով սպասում էր այն օրվան, թե երբ կավարտվի ամեն ինչ, և խաղաղություն կտիրի Արցախ աշխարհում:

Առավոտ էր. արուսյակը դեռ նոր էր բարձրացել հորիզոնի վրա, դեռ նոր արշալույսի եզերագիծը սկսել էր կարմրել, Արցախում բացվել էր մի սարսափելի տեսարան: Քաղաքը ծխում էր կրակի մեջ, որպես մի ընդարձակ խարույկի տարածություն: Շուրջ բոլորը կոտորած, արյուն ու զոհեր, հրդեհներ† Սարսափից աննկարագրելի վիճակում էր ժողովուրդը: Անգամ մթությունը չկարողացավ արգելք լինել թշնամու կատաղի հարձակումներին: Ազերները կոտորում էին կրակից դուրս փաղչողներին, չխնայելով ոչ սեռ, ոչ հասակ† Ամեն կողմից լսելի էին աղաղակներ: Թշնամին խլում էր երեխային մոր գրկից և ձգում կրակի մեջ: Դպրոցների դռները վաղուց փակ էին: Պատմում են, որ 3–րդ թե 4-րդ դասարանում սովորող մի տղա վերցնում է պայուսակը, դուրս գալիս նկուղից ու բռնում դպրոց տանող ճամփան: Փողոցում նրան կանգնեցնում են և ասում. «Ուր ես գնում, չե՞ս տեսնում, կրակում են»: – «Ի՞նչ անեմ, թե կրակում են: Այս պատերազմը կարող է տարիներ տևել, ես հո անգրագետ չե՞մ մնալու»: Ահա այսպիսի անհավանական պատմություն, որ հավանական էր:

Մարդկանց հավատ ներշնչելով վաղվա հանդեպ՝ նկուղներում պատսպարվածներին հաճախակի այցի էին գալիս արվեստի գործիչներ, որոնց ելույթները գոտեպնդում էին մաքրդկանց: Մի խոսքով՝ յուրաքանչյուր ոք մղում էր իր բաժին պատերազմը, անմասն չէր համազգային պայքարից: Ասում են, եթե ազգի քսան տոկոսը կռվում է թշնամու դեմ, այդ ազգն անպարտելի է: Նժդեհյան ազգ-բանակ ձևակերպումը խիստ արդիական էր 20-րդ դարավերջի մեր կենացմահու պայքարում: Փառք Աստծո, պատերազմ գնացողները ըմբռնեցին այդ իմաստությունը: Հակառակ դեպքում դժվար թե ունենայինք ազատ ու անկախ Արցախ:

Պատերազմից հետո անցել են տարիներ: Մենք վերաշինել ենք մեր երկիրը ու աշխարհին ապացուցել ենք մեր գոյության իրավունքը: «Հայրենիքն ապրում է հայրենասիրությամբ, ընկնում է նրա պակասի պատճառով»: Ականջներիս օղ անենք Մեծն Նժդեհի այս պատգամը և ամեն օր մի բան անենք հայրենիքի համար:

Զարմանալի բան է մարդկային սիրտը, շատ անգամ նմանում է մի անսահմանության, որ ամփոփում է իր մեջ ամբողջ տիեզերք, շատ անգամ նման է մի լիքը անոթի, որի մեջ գտնված նյութը ընդդիմահարում է, տեղի չէ տալիս մի ուրիշին զետեղվելու: Եվ ավելի բացասական է նա, երբ լցված է անգթությամբ: Ո՞ր աստիճան անգութ պետք է լինի թշնամին, որ անգամ գիշերը, երբ ամպամած երկնքի վրա ոչ մի աստղ չէր երևում. երկինքը ու գետինը, կարծես, միացած լիներ թանձր-սևաթույթ զանգվածով, այդ ժամանակ էլ շարունակեր պաշարումը: Մեր մարտիկները արհեստավարժ չէին, սակայն կար մի բան, որը նրանց համար ավելի մեծ դեր խաղաց, քան ռազմական պատրաստվածությունը և տարավ նրանց դեպի հաղթանակ, դա մարտական ոգին էր, ազգային հայրենասիրական ոգին: Հայկական ուժերի վճռական գործողություններին թշնամին չկարողանալով դիմադրել և վախենալով ավելի ծանր կորուստներ կրելու մտքից՝ զինադադար է խնդրում 1994 թվականի մայիսի 14-ին: Ասում են՝ով կամավոր է գրվում, այն օրից հերոս է հիրավի: Արցախյան ազատամարտը տվեց ազատաբաղձ քաջորդիների մի ամբողջ համաստեղություն: Նրանք միավորվեցին, գիտակցելով, որ միայն զենքով կա հայոց փրկություն: Մեր բանակը հաղթեց և ազատագրեց ոսոխի կողմից նվաճված տարածքները: Մեր ոտքերի տակ ամուր հողն ու տունդ Արցախն է, և ազատագրված այս հայրենիքից պիտի մի երանելի օր բացվեն մեր բնօրանները տանող ճամփաները†

Հաղթանակը չէր լինի, եթե չլինեին մեր հերոսները՝ծեր թե երտասարդ: Նրանց այրամբ ներկված դաշտերը, քարուքանդ եղած պարիսպներն ու տաճարները ցասումնալից եղան դեռ երեկվա շրջանավարտների համար: Իսկական հերոսները նրանք են, ովքեր երբեք չեն ձգտում ոչ փայլուն անվան, ոչ էլ այդ անունը պարուրող փառքի: Հավերժ պատանի մնացած մեր նահատակների մասին պետք է խոսել պարզ ու անպաճույճ, ինչպիսին իրենց կյանքն էր: Թվում է՝ ուր որ է կբացվեն դարպասները, և տղաները կհայտնվեն փողոցում, կշարվեն նստարանի և ծայր կառնի զրույցը, որը կունենա մի ամբողջացում՝ հայրենիք:

Հիշենք, մեծարենք ու չմոռանանք մեր նահատակներին, ովքեր մտան պատմության մեջ որպես հերոսներ, իսկ վաղը սերունդներին կներկայանան որպես լեգենդ: Չէ՞ որ Աստված նրանց ընձեռեց բացառիկ, վերջին հնարավորությունը՝աստվածացման սուրբ ճանապարհին, այն է՝ կյանքը տալ հայրենիքին, հոգին հանձնել Աստծուն, պատիվը թողնել մեզ, որպեսզի հաճախ այցելենք նրանց ու խոնարհենք գլուխները մեր սեգ, քանզի այստեղ հանգչում է մի անհուն տիեզերք:

Տեր Աստված, ուզում եմ հավատալ, որ մեր սուրբ նահատակները կյանքի կկոչվեն քո երկնային արքայությունում: Հիմա նրանք կշարունակվեն իրենց քույրերի ու եղբայրների, զավակների, գալիք մանուկների մեջ, որոնք կկրեն իրենց անունները: Թող չլինի այսուհետ պատերազմ աշխարհի ոչ մի անկյունում: Թող ոչ մի մայր չհեռանա աշխարհից՝ ծխացող մորմոքը սրտում: Թող յուրաքանչյուր հայի սրտում վառ մնա մեր նահատակների հիշատակը՝ հանուն այն մեծ նպատակի, որի համար զոհվել են նրանք: Հավերժ փա~ռք Ազատության ու Անկախության համար զոհված մեր տղաներին:

Ես սիրում եմ քեզ, Արցախ

Աստղիկ Ասրյան



Հայրենիքը ոչ միայն հողն ու քարն է, այլև այդ հողին ու քարին շաղախված դարերն է ու մշակույթը՝ երգը, գիրը, ճարտարապետությունը: Հայրենիքն այս ամենի ճառագայթումն է մարդու հոգում: Իմ հայրենիքն Արցախն է՝ աշխարհից հեռու մի անկյուն, մի սրբացած հող, որի մեջ են մեր՝ դարեր շարունակ թափած արյունը, քրտինքն ու արցունքը, մեր ամբողջ կյանքն ու մեր մահը, մեր հանճարեղ նախնիների սուրբ աճյունները, որից ինքն էլ է սրբանում ու իմաստանում: Արցա՛խ, իմ աստվածացա՛ծ հայրենիք, որքա~ն հպարտ եմ, որ զավակն եմ քո հերոսացած ժողովրդի, մի ժողովրդի, որի փառահեղ պատմությունն ու անունը, դարերի խորքից են գալիս, որի արմատներն ամուր են կառչած սեփական որդիների արյամբ սրբացած հողին: Հպարտ եմ, քանզի զավակն եմ մի ժողովրդի, որն իր բազմադարյա կյանքի ճանապարհին երբեք չի ավերել, չի խլել օտարինը, անարդար ձևով օտարի ոչ մի կաթիլ արյուն չի թափել և առաջնորդվել է մի սկզբունքով.

«Օտարի հողին մի' հետամտիր,
Բայց քո երկիրն էլ նոցա մի' մատնիր»:

Մեր հազարամյա կյանքի երկար ճանապարհին ո՛չ բանակներ ունեինք մեր պաշտպանության համար, ոչ՛ ուժ, բայց հարատևեցինք: Հարատևեցինք, որովհետև օժտված էինք անհնարին վիճակում հնար գտնելու զարմանալի հատկությամբ, որից էլ տարիների ընթացքում թրծվել ու սրվել են մեր միտքը, ձիրքը, ձեռքը, բորբոքվել կառուցման ու ստեղծման տենչը: Այսօր մենք ունենք մի հզոր բանակ, որն իր ասպետական նկարագրով ցնցում է ողջ աշխարհը և ի լուր ամենքի՝հայտարարում. – Մենք չենք հանդուրժում ստրկությունը և ոչ մեկից ոչինչ չենք ուզում, գնացե՛ք ու ապրե՛ք խաղաղ ու երջանիկ: Եթե դուք սիրում եք Կյանքը, մենք սիրում ենք կյանքից ավելի թանկ բանը՝ Ազատությունը: Ամեն անգամ, թերթելով իմ ժողովրդի, առանձնապես Արցախյան հերոսամարտում զոհված հերոսների կյանքի պատմությունը, սիրտս լցվում է անսահման հպարտությամբ, անզուսպ հրճվանքով, և ուզում եմ բացականչել. <<Ես սիրում եմ քեզ,հայրենի՛ք: Վստահիր ինձ, և ես կլինեմ արժանի հետնորդն Ավոյի ու Բեկորի, Վահանի ու Վարդանի և բազու~մ-բազու~մ այլ հերոսների>>: Պատերազմի ուրվականը մեր հայրենի հողից դեռ չի հեռացել, բայց համոզված եմ, որ ինչ էլ լինի, Արցախը կպայքարի, կտոկա, կհարատևի և Հայկ նահապետի ժառանգների անմար ոգով կենսահաստատ կքայլի՛ դեպի հավերժություն†

Կորչի պատերազմը...

Մեր հերոսները

Ալյոնա Ենգիբարյան

Փոքրիկ արարածի պարզ ու խենթ պատկերացումներով մանուկը ստեղծեց իր հայրենիքի գեղահրաշ պատկերը: Այն սկսվում է իրենց տան բակից և տարածվում մինչև դպրոց՝ խանդավառ մանկության հետ մեկտեղ՝ ձեռք ձեռքի տված: Մեծանում է մանուկը՝ մանկությունը թողնելով կարոտատենչ անտառներում ու դաշտերում, անհոգ վազքը՝ մայթեզրերին, հիշողությունները՝ թփուտներում ու ընկերների հոգիների ակունքներում: Պատանու կապույտ-կապույտ երազները իրենց թևին տանում են նրա կյանքի հեքիաթը՝ հյուսված բազմագույն երիզներով:

Ավա~ղ, խարխլվեց նրա հեքիաթային երևակայությունը, ամեն ինչ փոշիացավ, դարձավ տեսիլք† Նրանից ուզում են խլել մանկությունը, ուզում են կործանել կյանքի հեքիաթը, ուզում են նրա հիշողությունը դարձնել ուրվական: Նա ընդվզեց, ըմբոստացավ: Նա թույլ չի տա թշնամուն, որ աղավաղի իր մաքրամաքուր հայոց լեզուն, իր գիրն ու դպրությունը: Նա վեր հառնեց իր խրոխտ կեցվածքով՝ պաշտպանելու իր ունեցածը՝ ապրելու ու արարելու տենչով†

- Հանդուրժել չի կարելի, քանզի դա մեր հոգու ցոլանքն է, նշխարն է մեր նվիրական, մեր նախնիների թափած արյան ցոլքն է, մենք պետք է պահպանենք մեր նվիրականը, - շշնջաց պատանին:

Եվ ցասկոտ ելավ պատանին Մոնթեի, Բեկորի հետ միասին: Ելավ, որ միանա Մայր Հայաստանին: Ելավ՝ ի ցույց բոլորին, որ ինքը հայ է, որ չպիտի ապրի իր մայր հողի մի մասից անջատված: Ելավ, որ փրկվի թշնամու արյունոտ ճիրաններից, նենգ դավերից:

Այո՛, հային բնաջնջելու մոլուցքով տարված, թշնամին կանգ չառավ իր ապագան կերտող հային ոչնչացնելու համար: Եվ ի զորու չլինելու պատճառով նա ծանր մռնչաց† Իսկ Արցախ աշխարհի հինավուրց՝ թուրք ջարդարարների հողմահար դռփյուններից վշտացած, դժնդակ օրեր ապրած, կենաց ու մահու կռիվներ կրած ու հաղթանակած հողը երկնեց: Երկունքի ցավով նա ծնեց հերոսներ, որ հետո նրանց տաքացնի իր ջերմ գրկում, նա տվեց նահատակներ, որ նրանք պատմեն աշխարհին իր մասին իր բարբառով: Երկնեց Արցախ աշխարհի երկինքը, երկնեց թշնամու զարկերի ներքո, երկնեց հաղթական երգի ներքո: Եվ հյուսվեց մի պատմություն՝ պարուրված արցախյան հերոսի թափած արյունով, արցախյան հողի մշակի ճակատի քրտինքով, արցախցի մանկան ճիչով, հայ երիտասարդի հարսանյաց շորի շրշյունով, արցախցի թիկն տված պապ ու տատի տաք ևիրհով: Պատմություն, որ գրված է հազարավոր ջահել գերեզմանաքարերի, հազարավոր որբ մանուկների սպասումնալից սրտերում, հեռավոր դարերից լսվող «Դլե-յամանի» ծալքերում:

Կանգ ա՛ռ, անցո՛ղ, և նայի՛ր† տե՛ս, թե ինչ են պատմում այս հուշարձանները, կոթողները, լսի՛ր նրանց պատմությունը, որ հյուսված է կենաց ու մահու պայքարի, ապրելու ու արարելու տենչի, հույսի ու հավատի ծարավի ալիքով† Նրանք կանգնած են որպես անցյալի պատմության լուռ վկաներ, ու նրանց պետք է հասկանալ՝ առանց պեղումների: Նրանք կանգնած են որպես անցյալի խոսուն վկաներ, որ դուրս են ժայթքել անցյալի դաժան ու դժվար սպսպատներից ու այսօր արյան ու երազանքի պատկերով վերարթնացնում են մեր նախնիների կյանքի հախուռն տարերքը: Նրանք ապրում են և ինձ ստիպում են, որ ես խոսեմ†

Կպատմեմ† Այս հուշաքարերը այնքան հարազատ են: Իմ նախնիների անհատական կնիքով ստեղծված այս քանդակները անմահության գրկում արցախցու կերպարն են մաքրագործում: Մեր հերոսների թողած լռությունը քար չէ, այլ կյանքի սիրուց ժայթքած հավատ, որը հսկում է Արցախի խաղաղությունը, և անվերջ վետվետում մի քաղցր երազ, հուշ, պատմություն՝ գրված մաքրամաքուր այս հուշաքարի վրա:

Կանգ ա՛ռ, անցո՛ղ, և ունկընդրի՛ր, նրանք քո մեջ կծնեն հուսավառ զգացումներ, ըմպի՛ր այդ հավատից մի կաթիլ և կըմբոշխնես հույսի կաթիլներ և կտեսնես մի մեծ ազգի ապրելու ու գոյատևելու արարողության ընթացքը† Կանգ ա՛ռ, որովհետև նրանք վեր են հառել խրոխտ կեցվածքով՝ պաշտպանելու իրենց ինքնուրույնությունը, մանկությունը, լեզուն, իրենց գիրն ու դպրությունը, իրենց նվիրականը: Անցո՛ղդ, նրանց ծնել է բազում հաղթանակներ կրած այս հողը և այժմ ջերմությամբ ու գորովանքով փայփայում է անթեղված նրանց հոգիները, մրմնջում անուշ օրորոցային:

Սիրում եմ քեզ, իմ Արցա՛խ աշխարհ, մեծ աշխարհի մեջ դու իմ մեծ աշխարհ: Այստեղ են ծլարձակել իմ տասնվեց գարունները, այստեղ եմ ես առաջին անգամ թոթովել, այստեղ եմ ես քայլել ու մեծացել: Այստեղ ես կշարունակեմ իմ հայրենիքի հերոսների գործը, կպեղեմ իմ հայրենիքի՝ աշխարհին դեռևս անհայտ պատմությունները, կհյուսեմ նոր պատմություն†

Կանգնած եմ Արցախի «Պապն ու տատը» խորհրդանիշի առաջ, և հոգիս լցվում է պաթոսով, որ կանգուն են իմ հայրենիքի մեծ պապն ու տատը, տեսնում են իրենց թոռների հաջողությունները, օր ու գիշեր հսկում են նրանց արարիչ աշխատանքը, ըմբոշխնում արցախյան անարատ օդը և վայելում իրենց ծերունական հաճույքը† Դա է կյանքի իմաստը, որ դարերից եկել և արմատավորվել է մեր սովորույթներում†

История моего края

Арсен Карапетян

Пусть мне твердят, что есть края иные,
Что в мире есть иная красота.
А я люблю свои места родные,
Свои родные, милые места.
Ю. Антонов

У каждого человека есть родина, у одного – это его дом, у другого – его родной город, у некоторых – это целая страна.

Я живу в Арцахе и горжусь нашей могущественной страной, ее добрыми и мудрыми людьми. Хочу рассказать об одном маленьком уголке в Арцахе – это Кашатахский район. Самая привлекательная и интересная местность нашей страны, а все потому, что все здесь родное, любимое, свое.

Кашатах охватывает южную и юго-западную части бывшей провинции Агаэчк, который в последующие века приобретает значительную историческую роль, нередко упоминается в летописях. Этот край известен своим бесценным историко-культурным наследием, удивительными произведениями человеческих рук, неповторимыми историческими событиями и славными именами. Кашатах может называться жемчужиной, украшающей нашу страну. Уютные села со своими культурными традициями являются носителями славы, богатства, величия и духовной силы.

Мое село – Арцвашен. Я чувствую гордость оттого, что живу здесь, на этой исторической земле, любовь к которой во мне воспитали с раннего детства мои родители и учителя. Село расположено у реки Воротан – лучшего места для отдыха в летнюю жару. Красота реки видна в солнечных лучах. Окружающая природа позволяет слиться с ней воедино, проникнуться ее красотой, почувствовать ее.

Удивительна и прекрасна природа края. Весной поражают купающиеся в аромате цветущие деревья, летом – разноцветные краски огромного количества цветов, растущих перед каждым домом. Осень приносит щедрый урожай, и край тонет в густом фруктовом запахе. А зимой Кашатах – сказочно-пушистый уголок, искрящийся на солнце миллиардами искринок.

Сегодня историю района и села вершат мои современники, мои односельчане. Это люди самых разных профессий, любящие свое дело, свое село, свою страну.

И как же тобой не гордиться,
Нет на свете тебя красивей.
Родной уголочек Арцаха,
Нет края другого милей.

Традиции нашего края

Анна Маилян

Арцах - это древний армянский край со своей историей, обычаями и традициями. Само слово "традиция" произошло от латинского слова traditio, что означает "передать". Арцах сумел сохранить свое истинное духовное богатство – религию, культуру и многовековые традиции, которые строго соблюдаются. Человек должен знать культуру своего народа, его прошлое и настоящее. Традиции нашего народа связаны с его исторической судьбой. Наш народ богат своими национальными традициями. Хочу выделить лишь некоторые из них: народные праздники, почтительное отношение к старшим и к женщине, гостеприимство, традиционно уважительное отношение к Церкви, хачкарам, особое отношение к детям, национальная кухня.

Армяне особо уважительно относятся к старшим, считаются с их мнением, особенно в вопросах семейной жизни. Соблюдаются внешние знаки внимания к старикам, при старших не курят, громко не разговаривают, встают, если в дом вошел пожилой человек. Символом Арцаха является памятник, который в народе называют "Дед и Баба". Монумент называется "Мы - наши горы", что свидетельствует о долгожительстве наших стариков и преклонении перед ними.

Хочу отметить один из главных обрядов. Это свадьба. В ее церемонию входит сговор, обручение и само торжество, где собираются все родственники, друзья, соседи. Самая уважаемая семейная пара из окружения жениха и невесты становятся "крестными".

Рождение ребенка - большое счастье. Этому событию очень радовались, особенно рождению сына – продолжателя рода. Ребенка не показывают никому, кроме близких, в течение 40 дней после рождения.

Очень интересна традиция празднования появления первого зуба у малышей. Собирается вся родня, на голову малыша, прикрытую платком, сыплют карабахскую кашу "кчехаш", которую варят из фасоли, гороха, пшеницы, кукурузы. Перед малышом раскладываются разные предметы, символизирующие разные специальности. В зависимости от того, какой предмет первым возьмет малыш, предполагается, кем он станет в будущем.

Про гостеприимство нашего народа знают многие. По любому радостному случаю обязательно накрывают стол. Местные жители поражают гостей доброжелательным отношением, открытостью, искренней радостью встречи. Они угощают гостей неповторимой карабахской едой. Арцахская кухня прославилась своим женгялов хацом, карабахской кятой, куркутом, хашламой, хлебом, испеченным в тоныре. А где можно попробовать бякмяз, сваренный из туты! Сам тут является символом Арцаха. В недавнем прошлом листья тутового дерева использовались как сырье для карабахской шелковой нити. В столице Арцаха действовал шелковый комбинат, продукция которого отправлялась в республики СССР и за его пределы.

Наш край славится знаменитой тутовой водкой, которая с незапамятных времен использовалась не только во время застолий, но и как микстура для профилактики желудочно-кишечного тракта. Необходимо отметить немаловажную роль в местных традициях знаменитых карабахских вин.

В последние годы стало традиционным проведение в разных селах праздников, посвященных женгялов хацу, вину, солениям, куркуту и другим национальным блюдам.

Большое внимание уделяется и проведению традиционных игр среди молодежи: перетягивание каната, "петушиные бои" на одной ноге и другим состязаниям.

Я с уважением отношусь к нашим традициям и обычаям и надеюсь, что молодежь не забудет устоявшиеся веками традиции нашего народа, сохранит их и передаст их следующему поколению.

Ես սիրում եմ քեզ, Արցախ

Աննա Մարտիրոսյան

Ուզում եմ՝ ապրես իրրև մի հսկա,
Եվ ժողովուրդդ արևոտ, պարզկա
Քո երկինքներով միշտ հպարտանա
Եվ միշտ արարի պայծառ ապագա...

Իմ հայրենիքը լեռների գրկում ծվարած մի անկյուն է՝ փոքրիկ, ինչպես ծերացած մայր, փոքրիկ, ինչպես նորածին զավակ, հեզ ու քնքուշ, ինչպես օրիորդ, բայց և խրոխտ, ու արի, ինչպես քաջարի մարտիկ:

Իմ երկիրը Մեծ Հայքի՝ մեր պատմական հայրենիքի չքնաղ բեկոր է, որն այսօր աշխարհին պատմում է իր հերոսական անցյալը, որն այսօր մարդկությանն է ներկայանում իր չքնաղ բնությամբ, իր անկեղծությամբ, իր Գանձասարով ու Ամարասով, Դադիվանքով ու Կաչաղակաբերդով, Շուշիով ու Ամենափրկիչ եկեղեցիով... Սա իմ չքնաղ Արցախն է, իմ հինավուրց ու հավերժ երիտասարդ հայրենիքը, որը գալիս է դարերի խորքից և դեպի ապագա դարերն է գնում:

Հպարտ եմ, որ ապրում եմ Արցախում, որ արժանի եմ արցախցի լինելու, արցախցի կոչվելու պատվին: Իմ մա՛յր Արցախ, իմ չքնա՛ղ օջախ, իմ սո՛ւրբ բնօրրան, ամեն անգամ քո անունը տալիս համակվում եմ հպարտությամբ, քանզի դու այն երկիրն ես, որ քաջություն է ունեցել արժանապատվորեն ընդունելու ճակատագրի բոլոր հարվածները, կարողացել է ազնիվ մնալ իր հանդեպ կատարված այնքան վայրագություններից հետո:

Արցա՛խ իմ, դու դիմացել ես դարերի մուժին, քանզի դարերում եղել ես անվախ ու միշտ հուսացել ես: Դու այն երկիրն ես, որ ամենադժվարին պահերին իսկ ստեղծագործել, արարել, արվեստի անմար կոթողներ է կերտել...

Հերոսակա՛ն իմ Արցախատուն, դու տեսար ավեր ու վիշտ, տեսար թալան ու կոտորած, բզկտվեցիր, ընկար անօգնական, բայց ելար նորից, շտկեցիր մեջքդ ու հպարտ քայլերով ընթացար առաջ՝ դեպի լուսավոր գալիք: Այսօր մենք ապրում ենք մի բարգավաճող երկրում, որի յուրաքանչյուր հաղթանակ հպարտություն է ներշնչում: Հարկավ, ամեն մի շինարարության ավարտ հաղթանակ է: Ինչո՞ւ: Մի պարզ պատճառով. քանի որ մենք պատերազմի բովով ենք անցել:

Իմ աննման Արցախի մեջ անթեղված են կոշտը, լեռնցիականը, բայց և քնքուշը, կանացին, նուրբը: Եվ դա պատահական չէ. Արցախցին միշտ էլ արարել է, տանջվել է, բայց միշտ անհիշաչար է մնացել նույնիսկ արյունռուշտ թշնամու հանդեպ:

Արցախյան երկինքը ասես անչար ու անաչառ արցախցու հոգին, էությունն ու խառնվածքը լինի՝ մաքուր ու անարատ:

Բայց հազար ինը հարյուր ութսունութին մեր լուրթ երկինքը մթագնեց, քանզի մռայլվեց արցախահայության հոգին: Ազատատենչ հայը այլևս չէր կարող հանդուրժել անարդարություն. նրա համբերության բաժակը լցվել էր: Մենք ելանք պայքարի...

Մեզ պատերազմ պարտադրեցին՝ մեծամտորեն կարծելով, թե կարող են կոտրել արցախցու ամրակուռ ոգին: Մենք խոշտանգվեցինք, թալանվեցինք, մենք ուղղակի տանջվեցինք մի քոչվոր ցեղի կողմից, որը նույնիսկ պատմություն չունի, սակայն իրեն հորջորջում է ոչ միայն Արցախի, այլև Հայաստանի տիրակալ:

Արցախյան պայքարի թեժ պահին ծնվեց հայոց բանակը՝ յուրաքանչյուր հայի հույսերի, նվիրական երազանքների խտացումը: Թշնամին այլևս ի զորու չէր որևէ բան անելու, քանզի մեր բանակը անպարտելի էր: Մաքառելով, մեկը մյուսի հետևից կենդանի լեգենդներ ծնելով, կյանքից ամուր կառչելով՝ կարողացանք հաղթել այս օրհասական պայքարում: Հազարավոր հայորդիների արյան գնով վաստակեցինք ազատ ապրելու ու արարելու իրավունքը:

Ես սիրում եմ քեզ, Արցա՛խ, ինձ ծնո՛ղ, ինձ սնո՛ղ մայր, սիրում եմ քեզ ամբողջ սրտով, հոգու ամբողջ զորությամբ: Այսօր դու տոնում ես հաղթանակներդ, պարտադրված պատերազմում տարած արժանի հաղթանակներդ: Արցա՛խ, ես սիրում եմ քեզ քո անկոտրում կամքի համար: Ես համոզված եմ, որ Նորին մեծությունն ճակատագիրը ընդունել է քո զոհը, որովհետև այն ամենաթանկն էր...

Ես՝ որպես արցախցի, այսօր անհուն բերկրանք եմ ապրում, որովհետև մենք կարողացանք դիմանալ ճակատագրի արհավիրքներին, ճակատագրի բոլոր հարվածներին և աներեր քայլերով առաջ ընթանալ:

Յուրաքանչյուր արցախցի մի սար է՝ անառիկ ու անպարտ: Յուրաքանչյուր արցախցի մշակութային գործիչ է. չէ՞ որ մեր երակներում հոսում է մեր նախնիների արյունը, չէ՞ որ մեր նախնիների համար մշակույթը կյանք էր: Այդ են վկայում մեր հուշարձանները, վանքերը, կոթողները, որոնք հպարտությամբ ասում են. «Ահա՛ մենք, որ եկել ենք դարերի խորքից և այսօր աշխարհին ենք ներկայանում մեր հինգհազարամյա պատմությամբ: Զգո՛յշ անցիր այստեղով: Այստեղ է ինքը՝ Ժամանակը, այստեղ է ինքը՝ Հավիտենությունը»:

Հավիտենության իմ սո՛ւրբ մասունք Արցախ, ի՛մ տուն, իմ շենշո՛ղ հայրենիք, դու իմ սրտում ես միշտ լինելու, ուր էլ լինեմ, այս լուսնի տակ ուր էլ գնամ...

Ես սիրում եմ քեզ, Արցախ

Լիզա Միրզոյան

Բարի՛ լույս†

Զարմացրի՞ ձեզ: Եթե արցախցի եք՝ մի՛ զարմացեք, որովհետև այսպես են դիմում իրար Արցախում՝ լինի ծանոթ, թե անծանոթ:

Բարի՛ լույս, իմ Արցա՛խ աշխարհ, լույսդ բարի: Թող գլուխս դնեմ քարեղեն քո ծնկներին, համբուրեմ քո լանջերի ցաված անհուները, Քիրսի, Մռովի գագաթներին ծվարած լույսերի մեջ թափառեմ ու խոստովանեմ քո հողին, քարին, ջրի շառաչին†

- Քո ցավը տանեմ, իմ մա՛յր հայրենիք†

Առավոտ է, լուսաբացի սարսուռ: Լույսը բարի հավաքվում, դառնում է հրե գունդ, գնդակի պես գլորվում իմ հայրենիքի երկնակամարով, դառնում երկնաբերձ բարդու վերջին նազանք, համբուրում արծաթափայլ փշատենու թավշե տերևները և դառնում անդաստաններին ալիքվող հորովել:

- Հո՛ւրա, հո՛, ապաս մատաղ†

Իմ Արցա՛խ աշխարհ, ես քեզ հենց այդպիսին եմ սիրում՝ մաքուր ու անապական, ավանդական ու հին, նոր ու արդիական, խենթ ու խանդավառ:

Գարունը Արցախ աշխարհում հաղթանակներով է բացվում, եռագույնով են վառվում իմ երկրի հորիզոնները:

Սո՛ւս, ակա՛նջ արա, բազմաչարչար իմ հողը նորից երկնում է, նոր ծիածաններ են ծնվում, նոր քարափներ են շիկնում, նոր արևներ խանձում աշխարհի ճակատը: ՈՒ երկունքի բոսորագույն շողի միջից հառնում է նոր մի Արցախ՝ այնքան ծեր ու այնքան ջահել, այնքան իմաստուն ու այնքան մանկորեն պարզ :

Սիրում եմ քո խելացնոր առավոտները՝ խորհրդավոր ու հեքիաթային: Հարսանիք է իմ հայրենի բնաշխարհում: Պարում են լեռները, պարում են քոչարի՝ ուս ուսի, թև թևի տված: Չգիտեմ լեռնե՞րն են առաջինը պարել այդ պարը, թե հայերը: Տատս միշտ ասում էր, որ լեռները մեր տղամարդիկ են, իսկ դաշտերը կանայք՝ առիթքնող ու պչրող: Ինչպե՞ս չխանդեն մեր լեռները, այլապես երկիրը չէր հարատևի, որովհետև մեր դաշտերը շատ երկրպագուներ ունեն:

Իմ սիրելի՛ Արցախ, ես սիրում եմ քո լեռների պարը՝ միասնական ու ներդաշնակ, խրոխտ ու ահազարհուր՝ ի տես մեր դարավոր թշնամիների:

Մենք ենք, մեր սարերը†

Խոնարհվեք արյունով և արցունքով ջրված արցախյան հողին և ակնածանքով համբուրեք. դուք կտեսնեք՝ ինչպես է ճաքում հողի շրթունքը, ու նրա ներսում ունդերը պայթում, և դուրս է գալիս ձնծաղիկը, մանուշակը, անմոռուկը†

Զգո՛յշ, չպոկե՛ք, նրանք մեր նահատակներն են՝ ծաղիկ դարձած և օրհնում են մեր այս գարունը, վերածնված մեր աշխարհը և ծաղկագորգի պես փռվում մեր վերելքի ճանապարհին:

Եվ մանուշակվում են մեր աչքերի մեջ կապույտ մի կարոտ ու մի երազանք, որ ծվեն-ծվեն լուծվել են աղի արտասուքի մեջ և հավետ փակել տունդարձի ճամփան:

- Կռո՛ւնկ, իմ աշխարհից խաբրիկ մը չունի՞ս†

ՈՒ համառորեն ամեն գարուն բացվում են անմոռուկներն ու պատգամում.

- Հիշե՛ք ու պահանջե՛ք, կողոպտած մեր գարունները տուն բերեք:

Լսո՞ւմ եք:

Լսում եմ, իմ կորուսյա՛լ քույրեր ու եղբայրներ, ես ձեր կրթսեր եղբայր Արցախն եմ: Երդվում եմ այս եռագունված վաղորդայնով՝ ես ձեզ տուն կբերեմ: Հաղթանակներերի իմ դափնեպսակները կվառեմ ձեր տանջահար ոտների տակ, և ազատ Մասիսը կլինի մեր ամենաշենշող դափնեպսակը:

Գիտե՞ք, ես չավարտեցի Արցախի մասին իմ սիրո հեքիաթը, պարզապես օրը մայր մտավ, իսկ իմ հյուսած հեքիաթը վերջ չունի, գույները անթիվ են ու այլազան, և իմ սերը հավիտենության պես հավերժ է ու անսահման:

- Բարի՛ գիշեր, հայրենի՛ք, թույլ տուր մի քիչ էլ նավարկեմ երազներիս օվկիանոսում և քեզ էլ տանեմ հրաշքների աշխարհը:

ԷԴՈՒԱՐԴ ԱՐԾՐՈՒՆՅԱՆ. ԼԵՆԻՆԳՐԱԴ

Անահիտ Կորյուն

Էդուարդ Արծրունյանի գլխավերևում իր առաջին սիրո՝ Վալյայի դիմանկարն է կախված, որը Վարպետը 1948 թ. է վրձնել: Ռեպինի ակադեմիային կից գեղարվեստի դպրոցի սան 18-ամյա հայ նկարիչն առաջին անգամ սիրահարվում է: Վալյան՝ կապուտաչյա ու շիկահեր, դեռատի իր քնքշությամբ գրավում է երիտասարդ նկարչի սիրտը, ու վերջինս առանց մի վայրկյան հապաղելու՝ նկարում է նրան: Որոշ ժամանակ անց Արծրունյանը Վալյային կինո է հրավիրում և մերժում ստանալով՝բարկության պահին դանակով երկու կես է անում նկարը, սակայն ընկերների հորդորով՝ նկարը վերականգնում է, ու այն, տարիներ շարունակ պահպանվելով, եկել մեզ է հասել որպես գլուխգործոց:

1946 թվական, դեկտեմբեր ամիս: Երկու թխահեր պատանիներ, կծկված գնացքի մի անկյունում, անդադար կատակում են ու ենթադրություններ անում մեկնելիք քաղաքի մասին:

- Տեսնես՝ ինչը՞ղ քաղաք է էդ Լենինգրադը: Ծո՛, դու քանի բառ գիտես ռուսերեն՝ երևի դա, նետ,- կատակում է արծվաքիթ պատանին:

- Տեսնես՝ ուրդե՞ղ բդի մնանք, - անհանգստանում է ընկերը:

- Ինչ էլ էղնի, ես բդի Հայաստանի ամենալավ նկարիչներից մեկը դառնամ, ու իմ նկարները բդի Ազգային պատկերասրահում մշտական ցուցադրվեն: Չես հավատում, դե, կտեսնես: Օր ու գիշեր բդի աշխատեմ, - ասում է Էդիկը:

Լենինգրադում անասելի ցուրտ էր: Լենինականցի պատանի նկարիչներին որոշակի վերապահումներով ընդունում են տեղի արհեստագործակցական ուսումնարան, որտեղ նրանց ապրելու տեղ, անվճար հագուստ և սնունդ են տրամադրում: Սկզբնական շրջանում՝ 1948-51 թթ., Էդուարդ Արծրունյանը սովորում է Ռեպինի անվան գեղարվեստի ինստիտուտին կից արվեստի դպրոցում, այնուհետև՝ 1951-57 թթ.՝ Ռեպինի անվան գեղարվեստի ակադեմիայում, որտեղ նրա պրոֆեսորներն էին Սերեբրյակովը, Խարչենկոն և Ջոն Պապիկյանը: Արծրունյանը հնարավորության սահմաններում թանգարաններ է այցելում և նկարում: Ուսանողական տարիներին ձեռք բերած հմտությունները վարպետության են փոխակերպվում: Ուսումնառության սկզբնական շրջանում արված նկարները հիմնականում



Арцрунян в молодости

Последние годы

դիմանկարներ էին, բնանկարները՝ մի տեսակ ռոմանտիկ ու երազային՝ թերևս տարիքին համապատասխան: Այնուհետև Արծրունյանը սկսում է նախապատրաստվել իր դիպլոմային աշխատանքին, որի համար երեք տարի անդուլ աշխատում է, հենց այս ժամանակահատվածում է Արծրունյանը հմտանում որպես կոմպոզիցիայի վարպետ. դեռևս 1954-ից պահպանվել են նրա անթիվ-անհամար էսքիզները, որոնք հիմք հանդիսացան ,Տուն՝ դեպի հարազատ վայրերե մեծածավալ կոմպոզիցիայի համար:

Արծրունյանը գերազանցությամբ պաշտպանում է իր դիպլոմային աշխատանքը և 1957 թ. դեկտեմբերի 27-ին ԽՍՀՄ Նկարիչների միության լենինգրադյան մասնաճյուղին ահա այսպիսի դիմումով է ներկայանում. ,Խնդրում եմ ինձ ընդունել Նկարիչների միության լենինգրադյան մասնաճյուղ որպես թեկնածու: 1957 թ. ավարտել եմ Ռեպինի ինստիտուտը և ,Տուն՝ դեպի հարազատ վայրերե դիպլոմային նկարի համար ստացել եմ գեղանկարչի կոչումե: Նրա դասախոսը՝ պրոֆեսոր Խարչենկոն էլ երաշխավորագիր է գրում իր տաղանդաշատ ուսանողի մասին. ,Նրա կոմպոզիցիոն վարպետության մասին խոսում է նրա դիպլոմային աշխատանքը՝ ,Տուն՝ դեպի

Матах



Комитас, думы

հարազատ վայրերե նկարը, որը ամենաբարձր գնահատականի է արժանացել և այժմ ցուցադրվում է Մոսկվայումե: 1961 թ. արդեն Արծրունյանը ԽՍՀՄ Նկարիչների միության լենինգրադյան մասնաճյուղի լիարժեք անդամ էր և երկու տարի հետո վերոնշյալ հաստատություն պիտի նորից դիմումով ներկայանար՝ այս անգամ իր անձնական գործը Մոսկվա տեղափոխելու խնդրանքով:

Էդուարդ Արծրունյանը Լենինգրադում ապրում է 17 տարի: Այս զարմանահրաշ քաղաքն արվեստագետին լիարժեք ինքնադրսևորվելու և իր բոլոր տաղանդները բացահայտելու հնարավորություններով է օժտում, այստեղ է նա ապրում է առաջին սերը, ինչպես նաև իր կյանքի ամենամեծ հիասթափությունը:

Լենինգրա՛դ, Լենինգրա՛դ՝ ամենասիրելի քաղաք, առաջին սիրո քաղաք՝ պատանի Արծրունյանի ամենամեծ ձեռքբերումների քաղաք:



Портрет матери



Крестины

Валя

Иоанн Златоуст

О СВЯТОМ ВЕЛИКОМ ГРИГОРИИ ПРОСВЕТИТЕЛЕ, ПЕРВОСВЯЩЕННИКЕ БОГА НАШЕГО

...Я осмелился бы сказать, что он подобен Петру и Павлу. Как они возвратили великими усилиями и великою добродетелью западные области от идолослужения на путь, который ведет к познанию Бога, так и блаженный Григорий просветил восточные страны. Он научил их, что должно почитать Отца, Сына и Святого Духа, что нераздельное от Отца Слово приняло тело от Девы, что совершенный Бог сделался совершенным человеком и чрез рождение принял тело, непорочное и непричастное болезни.

Слово Божие, говорил он, - что выше красноречия, - соединилось с телом, жило среди людей, и отменило чрез крещение обрезание, которому Оно подверглось. Предан за нас Тот, который был неразделим от лона Отца; вознесено на крест Слово и умерло, по человеческой природе, но оставалось и пребывает бессмертным, по божественности, которая в Нем была. Так как из двойной природы Он сделался одним Христом, поэтому Он претерпел смерть телом, которое было соединено с божественным. Плоть, которая перенесла мучения, была Богом, и было бессмертным божество, которое оделось в тело. Божество сделало Богом плоть, и она была соединена со Словом так равномерно и прямо, что то, что умерло и было погребено за нас, тоже воскресло по божеству и ниспровергло преисподних. Это вы познавайте, этому поклоняйтесь, так как это - соединение со Словом - есть Бог над всеми.

Таково учение, которым он наставлял тот гордый и выдающийся народ.

Он отдал таланты, ему поверенные, приумноженными, возвращая именно не два за один, или четыре за два, или десять за пять, - но он приобрел мириады талантов, и потому слышал от Господа такие слова: “Добро, раб благий и верный, так как в малом до сих пор был верен, над многими тебя поставлю: войди в радость Господа твоего”.

Украшаю этого блаженного именем апостола, потому что он, наподобие прочих апостолов, проповедовал истинного Бога, разрушил идолов и идольские храмы, научил поклонятьсяся Богу неба и, по уничтожении суеверного богопочтения твари, установил почитание Творца твари.

Он с пылкою ревностью научил Писанию, вдохновенному свыше; написал беседы, полные мудрости, и наставил много народов.

Для Григория у меня имя нового Даниила. Как святой пророк перенес наказания от вавилонского царя, и его отогнал пастись в пустынные места, точно быка и под образом быка, так и молитвы Григория возвратили непокорного истине Тиридата, облеченного в кабаний образ, в образ человеческий. Подлинно, у него была вера, укрепленная на надежде, и цельная, как зерно горчицы, в котором, через порчу, не может возникнуть червь, ни уменьшить добротность зерна; поистине, у него была вера столь крепкая, что он твердо надеялся, что, о чем бы он ни попросил Бога, должно свершиться; и если бы он сказал горе: перенесись туда, - он считал бы за верное, что она несомненно должна перенестись. Следовательно, не может быть, чтобы он не веровал, что человек, облеченный в кабаний образ, может быть возвращен в прежний образ.

Но я сильно уважаю этого дивного мужа, и по своей воле стремлюсь к его похвале; боюсь, конечно, что мое слово будет неравно похвале такого мужа, однако не отступаю от намерения: надеюсь, что слабость моих сил будет побеждена отважностью духа. Итак, предложу, что в силах извлечь из того, в чем обнаружилась десница Божия.

О, новое предвестие! Солнце, Богом заключенное в пространном небе, посылает лучи сверху на землю; поистине, этот святой муж простер свои лучи до верха небес, из глубокого рва, в котором удерживался. Ангелы и архангелы, внимая, объявляли его блаженным, и служили ему, лежащему во рве. Они видели в водовместилище его тело, на небесах сияла его святость; телом на небе, ангелом на земле; имея тело, казался без тела; небесный человек, земной ангел, огненный столп с неба, голова которого касалась земли, - просветитель Армении, непоколебимое основание греков (Малой Армении), апостол Христов, предвещающий путь людям.

Прежде всего называю блаженною тебя, о, Кесария Каппадокийская, так как от тебя принял возложение рук пастырь многих народов. Посвященный и посвятивший сеяли тогда одним и тем же блеском добродетели.

Каппадокийцы были уже основаны на крепких корнях; и только один он имел свой корень, откуда другие, непричастные к корню, получили свой. Там собиралось много плодов работниками, которые возделывали некогда невозделанное; только он сам, работник, держа одною рукою рукоять плуга, другою умягчал словом истины многие невозделанные земли. Когда одним сошником открывал бесчисленные борозды, он обратно получил семя сам-пять и много плодов; и держа в горсти божественное семя, он засевал весьма много полей, рассевая перстами бесконечные зерна. Тогда в бороздах, прорезанных одною рукою, произрастали в одно время плоды, посеянные другою рукою.

Вагенак Балаян: «Любое обстоятельство для режиссёра – это опыт!»

Вагенак Балаян родился 1981 году, в городе Степанаван, Республика Армения, 29 ноября, в день образования армянской ССР (1920 год). После землетрясения, в 1988 году переехал в Россию, в Санкт-Петербург. В 1998 году поступил на юридический факультет Академии гражданской авиации. Работал юристом. Считает, что юридический факультет образовал в нем взрослость.

Окончил киношколу «Кадр». Его дипломной работой был документальный фильм «Душа и мимесис», с которым он участвовал в Московском международного кинофестиваля «Арт-кино» и Санкт-Петербургского кинофестиваля «Позитивного и доброго кино».

В 2014 году окончил Санкт-Петербургский университет кино и телевидения, мастерская режиссуры игрового кино Игоря Масленникова. Снял три короткометражных игровых фильма, которые были участниками многих кинофестивалей.

Вместе мы работали над лентами «Белым про черное», «История одного стихотворения», снятым по моим сценариям. Представляю вниманию читателей некоторые страницы жизни Вагенака Балаяна, рассказанные им самим.

Ваген Петросян

ТЕАТР И ДЕТИ

Первый опыт в театральной постановке случился ещё до поступления в Санкт-Петербургский университет кино и телевидения. В армянской общине ежегодно проводят вечера армянской культуры. Фольклорные песни, танцы, юмор и т.д. Я вызвался поставить детский спектакль по сказке Туманяна «Кувшин с золотом». И это был полный провал! Сам процесс репетиций проходил весело. Отобрал детей на роли, кстати, здесь нужно рассказать, что одну девочку, после двух читок, пришлось заменить и это было ужасно… так она обиделась… приходили её родители, ругали меня… я понял, что с детьми такие замены нужно проделывать очень аккуратно, а особенно с их родителями. Из армянского молодёжного центра «Нор серунд» мне помогали две девушки. Одна была помощником режиссёра, вторая художником-декоратором и художником по костюму. Было много весёлых дней. Были обиды со стороны детей за чрезмерную муштру. Интересные костюмы и декорации изготовила художник. В итоге всё было готово в срок!

